

ԱՆՈՐՈՇ ԳԵՐԲԱՅԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՐԱՑՈՒՅՑԸ

ԻՍԱՑԱՅԵԼ ԻՇԽԱՆՅԱՆ

Մինչև այժմ այսպիսի մի ամբողջական հարացույց կազմելու փորձ չի արվել, մինչդեռ անորոշ դերբայի մեծաքանակ և բազմաբնույթ առկայությունը արդի հայերենի խոսքաշարում շատ կարևոր է դարձնում այդ միավորի տարաբնույթ բոլոր գործառույթների քերականական դասակարգումը և յուրաքանչյուր կիրառության բնութագրումը:

Նախքան անորոշ դերբայի կիրառությունների հարացուցային թվարկումը, անհրաժեշտ է երկու խոսքով ներկայացնել այդ միավորի խոսքիմասային արժեքը: Անորոշ դերբայը (–ել, –ալ վերջույթներով) արդի հայերենի չորս իսկական (ադատ) դերբայներից մեկն է, որ սակայն զգալապես նաև գոյական է: Իրեն դերբայի՝ նրա քերականական հատկանիշներն են. 1) վ մասնիկ առնելու ընդունակությունը՝ սիրել > սիրվել և այդ մասնիկն առնող ու չառնող շարքերի հակադրության առկայությունը՝ սիրել, գրել, բերել... և վագել, ժպտալ, ենջել..., 2) ուղիղ խնդիր առնելու հատկությունը՝ սիրել եղբորը, նամակ գրել, 3) չ ժխտական առնելու հատկությունը՝ սիրել > չսիրել: Այս հատկանիշներն ընդհանուր դերբայական են և հատուկ են նաև մյուս երեք իսկական դերբայներին՝ հարակատար (–ած), ենթակայական (–ող), մակբայական (–ելիս, –ալիս): Անորոշ դերբայի գոյականական հատկանիշներն են. 1) հոլովվելը՝ սիրել, սիրելու, սիրելուց, սիրելով, սիրելում, 2) հոգ առնելը՝ սիրելս, սիրելի, սիրելի: Սրանով ժամանակակից հայերենի անորոշ դերբայը գոյական է, և այս հիմքի վրա են որոշ լեզվաբաններ (օրինակ, Մ. Աբեղյանը) այն գոյական համարում: Անորոշ դերբայի գոյականական առանձնահատկությունը արտահայտվում է նաև իմաստային գծով, անորոշ դերբայն ի վերջո անուն է, թեկուզ գործողության, գործույթի, եղելության անուն: Այն կարելի էր սովորական բայանուն (գոյական) համարել, եթե չունենար նաև դերբայական վերոհիշյալ արտահայտությունները:

Անորոշ դերբայի գոյականական հատկանիշները լիովին դրսևորվում են շարահյուսական կիրառություններում: Այս դերբայը գործածվում է բոլոր 5 հոլովներով, բայց 7 հոլովի համակարգի՝ բոլոր 7 հոլովներով (բոլոր վերլուծումներն անում ենք բայց 5 հոլովի համակարգի): Սա նշանակում է. քանի որ շարահյուսական իր դերերում անորոշ դերբայը լինում է տրական, բացառական, գործիական, ներգոյական հոլովներով, ուրեմն և անկասկած է, որ նախադասություններում նրա ուղիղ ձևը, որը հակադիր է այս չորս ձևերին, ուղղական հոլով է:

Անորոշ դերբայը հենքավա—Արդի հայերենում ենթակայի քերականական երկու հատկանիշներն են՝ ուղղական հոլով ունենալը և դեմքով ու թվով ստորոգյալի (դիմավոր բայի) հետ համաձայնելը: Արդի հայերենում բացի 1-ին և 2-րդ դեմքի անձնական դեղանուններից և դիմորոշ ս, դ հոգ ստացած անձի անուն գոյականներից, մնացած գոյականներն ու գոյականական այլ բառերն ունեն 3-րդ դեմքի արժեք: Դրանցից է անորոշ դերբայը: Ուստի ենթակայի պաշտոնում այն ունենում է 3-րդ դեմք և գրեթե միշտ հանդես է գալիս եղակի թվով: Ենթակայի պաշտոնում անորոշ դերբայը իր եղակի երրորդ դեմքով համաձայնում է եղակի երրորդ դեմք ունեցող ստորոգյալի հետ: Օրինակ. «Սպասելը ձանձրացրեց» նախադասության մեջ սպասելը ենթակա է և ունի այդ միավորի երկու հատկանիշները՝ ուղղական հոլով ու դիմաթվային համաձայնու-

թյուն զիմավոր բայի հետ Կարելի է նույն նախադասության ղերբայի դիրքում դնել բայանուն՝ «Սպասումը ձանձրացրեց»։ և գոյական-ծնթական (սպասումը) շարահյուսական ճիշտ նույն հատկություններն ունի, ինչ անորոշ ղերբայ-ենթակալն։

Անորոշ ղերբայը ենթակայի դերում երկու տարբերակ ունի՝ հոգով, որ ունենում է աղաս շարադասություն, և առանց հոգի՝ մեծ մասամբ ստորոգյալի համեմատ ետադաս։ Վերը բերված օրինակը («Սպասելը ձանձրացրեց») վերաբերում է առաջին տարբերակին։ Նույն բնույթի են նաև՝ «խոսելն արծաթ է, խոսելը՝ ոսկի», «Միևիկը վայրենի սովորություն է», «Բարձր խոսելն արգելված է» և այլն։ Այսպիսի ղերբայ-ենթակալները գյուրդին են ճանաչվում։ Անորոշ ղերբայ-ենթակայի մյուս տարբերակի համար նախ բնորոշ է՝ անհրաժեշտ է, պետք է, կարելի է, հնարավոր է, և բայական այսպիսի մի քանի այլ կտայայությունների հետ հանդես գալը։ Անորոշ ղերբայն այդ նույն բնույթի ենթակա է լինում նաև ճիշտ է, լավ է, քաղցր է և ուրիշ ածական+ի, կապակցությունների հետ։ Ընդ որում, և զիմավոր բայով կապված կապակցությունները լինում են ստորոգյալ օրինակներ։ «Անհրաժեշտ էր խորտակել այդ պատվանդանը» (ԲՆԺ, 7, 460), «Պետք է փախչել» (ԲՆԺ, 7, 19), «Մինչդեռ հնարավոր է շինել առանց քանդելու», «Հորեղբոր դռանը կարելի է նստել» (ՀՄՄ, 227), «Քաղցր է նստել անկրակ» (ՎՏՆԺ, 1, 291), «Հաճելի է գիտակցել»։ Այս կառույցներում ավելի քիչ ղեպներում է ենթակա-ղերբայը լինում նախադաս, ինչպես՝ «Պատասխանել կարելի է»։ Անորոշ ղերբայը ենթակա է նաև «Որոշվեց վերականգնել», «Մնում էր փախչել» (ԱԲՆ, 1, 13) միայն զիմավոր բայով արտահայտված (պարզ) ստորոգյալ ունեցող այսպիսի կառույցների մեջ։ Այս բոլոր կառույցներում անորոշ ղերբայի ենթակա լինելը դրսևում է տարբեր փոխարկումներով, վերջները վերը բերված նախադասություններից մեկի առանցքային մասը՝ «Անհրաժեշտ էր խորտակել»։ Բաժանենք երկու միավորի՝ Անհրաժեշտ էր և խորտակել։ միավորներից յուրաքանչյուրը համարակալել ենք՝ № 1 Անհրաժեշտ էր № 2 խորտակել։ Արդ, երկրորդ միավորի տեղում դնենք որևէ գոյական, օրինակ, զործ, կունենանք № 1 Անհրաժեշտ էր № 2 դործ, որտեղ զործ-ը եղակի երրորդ ղեմքով համաձայնել է եղակի երրորդ ղեմքի ստորոգյալի հետ, այսինքն՝ ունենք ստորոգյալ—ենթակա սովորական հարաբերությունը։ Այս վերջին բնույթի նախադասություններ հայերեն խոսքում նույնպես հաճախ են հանդիպում։ Օրինակ՝ «Անհրաժեշտ էր փորձ», որտեղ փորձ-ը ենթակա է։ Նշանակում է նույն № 2 դիրքում հանդես եկող անորոշ ղերբայը նույնպես ենթակա է։ Այսպիսով, եթե № 1 դիրքը ստորոգյալն է, ապա № 2 դիրքը ենթական է, և միևնույն է, այդ երկրորդ դիրքում լինեն զործ, փորձ և այլ գոյականներ, թե խորտակել, կառուցել կամ այլ անորոշ ղերբայներ, նրանք ենթակա են։

Կարելի է անել նաև հետևյալ փոխարկումը։ № 2 դիրքում ղերբայի փոխարեն առգաղբել առաջին կամ երկրորդ ղեմքի անձնական ղերանուն։ իրա հետևանքով № 1 դիրքի ղեմքը կփոխվի՝ կդառնա առաջին կամ երկրորդ. օրինակ՝ № 1 Անհրաժեշտ էր № 2 դու, № 1 Անհրաժեշտ էր № 2 ես կամ՝ № 1 Անհրաժեշտ էրին № 2 մեմ և այլն։ Անկասկած է, որ № 1-ը ղեմքով, թվով համաձայնել է № 2-ի հետ, ուստի № 1-ը ստորոգյալ է, № 2-ը՝ ենթակա, և № 1 Անհրաժեշտ էր № 2 խորտակել, № 1 Անհրաժեշտ է № 2 կառուցել, № 1 Անհրաժեշտ է, № 2 խոսել ու բոլոր համանման կառույցներում անորոշ ղերբայը (№ 2

¹ ենթակայի դերում անորոշ ղերբայը մեծ մասամբ իր լրացումներն է ունենում. բերված օրինակներում՝ «խորտակել այդ պատվանդանը» կամ «նստել անկրակ», ընդգծվածները ղերբայ-ենթակայի լրացումներն են կամ լրացման լրացումները։ Երբեմն ղերբայն իր լրացումներով են համարում ենթակա (այսինքն՝ ամբողջ ղերբայական բառակապակցությունը), որից հարցի էությունը չի փոխվում, քանի որ գերադասը (բուն ենթակա) միևնույն է, մնում է անորոշ ղերբայը, սրա լրացումներն էլ մնում են իբրև այդպիսիք։ Նույն վերաբերում է խնդրի, պարագայի, վերագրի դերում հանդես եկող անորոշ ղերբայներին։

դիրք) ենթակա է Կամ՝ «Հարկավոր էր որակյալ հեղինակներ գտնել» (ՀՄՄ, 181), և «նրան հարկավոր էր ընդարձակ դաշտ» (ՄԳՄ, 169)։ Երկու նախադասություններ միենույն հարկավոր էր ստորոգյալով։ Մի ղեպքում առկա է հարկավոր էր գտնել, մյուս ղեպքում հարկավոր էր դաշտ։ Դաշտ-ը ենթակա է, ուստի հավասարապես ենթակա է նաև գտնել-ը, եթե միենույն դիրքում առաջին կամ երկրորդ ղեմքի դերանուն ղենք, բայց ղեմքը զարձյալ կփոխվի, ինչպես՝ «ես հարկավոր եմ», «Դուք հարկավոր եք» և այլն։ Նույն փորձերը կարելի է անել նաև պետք է, կարելի է, հնարավոր է, ճիշտ է, փայլք է, որոշվեց, մնում էր և վերոհիշյալ բնույթի մյուս բայական կապակցություններով (կամ դիմավոր բայերով) ու անորոշ դերբայով կազմվող կառույցների նկատմամբ։ Բոլոր ղեպքերում անորոշ դերբայը ենթակայի (N 2) դիրքն է զբաղեցնում, այսինքն՝ ենթակա է։ Նույնը երևում է նաև շարադասության փոփոխմամբ, երբ անորոշ դերբայը նախադաս զառնալով որոշիչ հոգ է առնում, ինչպես՝ պետք է գնալ > գնալը պետք է, հարկավոր է, բերել > բերելը հարկավոր է, կարելի է մտնել > մտնելը կարելի է, որոշվեց կառուցել > կառուցելը որոշվեց և այլն։ Նախադաս հոգավոր դերբայների ենթակա լինելն այսպիսի կառույցներում ակնհայտ է, կնշանակի ետադաս դիրքում դերբայը նույնպես ենթակա է։

Մի շարք ալլ լեզուներում, մասնավորապես ռուսերենում, բայի անորոշ ձևը (ինֆինիտիվը) գոյականական հատկանիշ չունի և ենթակա կամ ինդիք լինելը չի կարող։ Օրինակ՝ «Անհրաժեշտ է կառուցել» նախադասության «Необходимо построить» ռուսերեն տարբերակում построит անորոշ ձևը հոլով և թիվ չունի, գոյական չէ, ուստի ենթակա չէ (ռուսերենի գոյականին հատուկ սեռ և չունի)։ Այն որակապես տարբեր է հայերենի կառուցել-ից, որ, ինչպես տեսանք, եզակի երրորդ ղեմք և ուղղական հոլով ունի ու համաձայնել է անհրաժեշտ է ստորոգյալի հետ և անենթակա է։ Այսպիսով, այս և համանման հայերեն ու ռուսերեն կառույցները ըստ բովանդակության նույնն են կամ նման, իսկ ըստ քերականական արտահայտության՝ բոլորովին տարբեր, ամեն մեկը համապատասխանում է այն լեզվի քերականական տվյալ առանձնահատկությանը, որին պատկանում է։

Այս տարբերությունը նկատի չունենալով՝ լեզվաբանները երբեմն հայերենի վերոհիշյալ կառույցները գնահատում են ըստ ռուսերենի հոմանիշ կառույցների քերականական բնույթի՝ «Անհրաժեշտ է խորտակել», «Անհրաժեշտ է կառուցել», «Պետք է փախչել», «Կարելի է նստել», «Հնարավոր է սղատել» ու համանման կաղապարները համարելով անենթակա նախադասության միասնական ստորոգյալ, ուրիշները՝ անվանաբայական բաղադրյալ ստորոգյալ կամ՝ բայական բաղադրյալ ստորոգյալ²։ Բայց այդպիսի մոտեցումը նախ հսկակատակ է։ Նախադասությունը համարվում է անենթակա, իսկ նրա մաս կազմող վերոհիշյալ բնույթի կառույցը՝ ստորոգյալ։ մինչդեռ առանց ենթակայի ստորոգյալ լինել չի կարող³։ Իսկ իրականում, ինչպես տեսանք, այդ կառույցները երկկազմ են՝ ենթակայով (անորոշ դերբայ) և ստորոգյալով։

Անորոշ դերբայն ուղիղ խնդիր—Անցողական բայերի հետ անորոշ դերբայը լինում է ուղղական հոլովով ուղիղ խնդիր և ունենում է այս լրացման հատկանիշը՝ դառնում է ենթակա՝ նախադասության ներգործական կառույցը կրավորականի փոխակերպելիս։ օրինակ (ընդգծված են անորոշ դերբայները ուղիղ խնդրի և ենթակայի դերերում)։ «Միայնակ ես սիրում եմ նստել երեքուն լուսերում» (ՎՏԵԿ, 1, 160), փոխակերպում՝ «Երեքուն լուսերում միայնակ նշուսելը սիրվում է իմ կողմից» (այսպիսի փոխակերպումների ղեպքում երբեմն փոքր-ինչ արհեստական է ստացվում փոխակերպման արդյունքը), կամ՝ «Նա շարունակեց համարագրել» (ԱԲԵ, 2, 51), փոխակերպում՝ «Համարագրելը շարունակվեց նրա կողմից», «Ամեն անգամ նա մոռանում էր ասել» (ՀՄՄՎ, 53),

² Հմմտ. օրինակ, «Հայոց լեզու», մաս 2, Երևան, 1975, էջ 176, «Ժամանակակից հայոց լեզու», հ. 3, Երևան, 1976, էջ 161—162 և այլն։

³ Այս մասին մանրամասն տես Պատմա-բանասիրական հանդես, 1982, № 4, էջ 180—182։

փոխակերպում՝ «Ասելը ամեն անգամ մոռացվում էր նրա կողմից», «Հաթամի աղջիկը այդ օրը մոռացավ Բաղու թաշկինակի մեջ հաց կապել» (ԱՔԾ, 1, 26), փոխակերպում՝ «Այդ օրը Բաղու թաշկինակի մեջ հաց կապելը մոռացվեց Հաթամի աղջկա կողմից» և այլն: Կարելի է նաև անորոշ դերբայով արտահայտված այսպիսի լրացումները փոխարինել սովորական գոյականներով, որոնց ուղիղ խնդիր լինելը, թերևս, ավելի ակնհայտ է, ինչպես «Ես սիրում եմ երգել», փոխակերպում՝ «Ես սիրում եմ երգ», «Նա շարունակեց աշխատել», փոխակերպում՝ «Նա շարունակեց աշխատանք», «Նա մոռանում է ասել», փոխակերպում՝ «Նա մոռանում է ասելիք» և այլն: Ընդգծված գոյականները ուղիղ խնդիր են, կնշանակի կառույցի մեջ նույն դիրքը զբաղեցնող անորոշ դերբայները նույնպես ուղիղ խնդիր են:

Եվ դարձյալ՝ որոշ լեզվաբաններ, ըստ երևույթին, անհրաժեշտ չափով հաշվի չառնելով հայերենի անորոշ դերբայի գոյականական հատկանիշը՝ դիմավոր բայ+անորոշ դերբայ-ուղիղ խնդիր կառույցը գնահատում են ըստ ոտուբերենի այնպիսի կառույցների քերականական արժեքի, ինչպիսիք են՝ «Продолю петь», «Продолжал писать», «Забыл сказать» և այլն: Ըստ այդմ, սիրում եմ նստել, սիրում է երգել, շարունակեց համարագրել, մոռանում էր նստել և մյուս համանման կառույցները համարում են միասնական ստորոգյալ կամ բաղադրյալ բայական ստորոգյալ, ուրիշները՝ բարդ ստորոգյալ: Մինչդեռ, ինչպես ասվեց, ոտուբերենի անորոշ բայածնը գոյականի քերականական այնպիսի հատկանիշներ չունի, ինչպիսիք ունի հայերենի անորոշ դերբայը, և բերված օրինակներում՝ «Продолю петь», «Продолжал писать», «Забыл сказать», հավանաբար, իրոք, միասնական ստորոգյալներ են, և ստույգ է, որ դրանցում անորոշները քերականորեն ուղիղ խնդիր չեն: Իսկ հայերենում, ինչպես տեսանք, «Ես սիրում եմ երգել», «Նա շարունակում է գրել», «Ես մոռացա ասել» նախադասություններում անորոշ դերբայները իսկական ուղիղ խնդիրներ են:

Անորոշ դերբայն անուղղակի խնդիր—Այս դերբայն անուղղակի խնդիր է լինում տրական, բացառական, գործիական, երբեմն էլ, ինչպես կտեսնենք, ուղղական, շատ հազվադեպ՝ ներգոյական հոլովներով: Տրականով (կամ սեռական-սրբականով)՝ «Իսկ դու, սիրելի Սամվել, պետք է պատրաստվես հորդ քնդառաջ գնալու» (ՐԾԺ, 7, 117), «Մայրը պատրաստվում էր գյուղ գնալու», «Ինքը սիրով համաձայնեց աշխատելու Ծալանի հետ», «Բուրդը շտապում էին հանդիպելու Սոսյանի հետ»: Անորոշ դերբայի տրական հոլովով արտահայտված այս խնդիրը մեծ մասամբ հնարավոր է լինում փոխարինել նույնարժեք գոյական-խնդրով, ինչպես՝ «Պատրաստվիր գործելու» և «Պատրաստվիր գործի». սրանից պարզ է դառնում, որ գործելու և գործի նույնարժեք լրացումներ են՝ երկուսն էլ՝ անուղղակի խնդիր:

Բացառականով՝ «Ոչ էլ Մեսրոպն է դադարում հայոց պատմություն կարդալուց» (ՀՄԾ, 213), «Մյուս երկուսը հրաժարվել էին եզրափակիչ մրցմանը մասնակցելուց», «Քույրը երկրորդ ժամանակ խուսափում էր նրան հանդիպելուց», «Զգուշանում էր նրա հետ խոսելուց» (հմմտ. «Հրաժարվել էին մրցումից», «խուսափում էր հանդիպումից» և այլն): Գործիականով՝ «Մենք հիանում էինք նրա այդքան զեղեցիկ խոսելով», «Նա երեխային բժշկեց նվազելով ու երգելով» (հմմտ. «Հիանում էինք խոսելով», «Բժշկեց երգով»): Գործիական հոլովով անորոշ դերբայը անուղղակի խնդրի պաշտոն ավելի քիչ ղեկավարում է կատարում, ավելի հաճախ լինում է պարագա:

Ուղղականով. Մեր ծրագրից դուրս է ընդհանրապես անդրադառնալ ուղղական հոլովով հայերենում եղած անուղղակի խնդիրների հարցին, կխոսենք միայն անորոշ դերբային հատուկ մի երևույթի մասին: Տրական ու բացառական հոլովներով զրվող անորոշ դերբայը անուղղակի խնդրի դերում մեծ մասամբ

⁴ Տես, օրինակ, «Հայոց լեզու», մաս 2, էջ 157—159, «Ժամանակակից հայոց լեզու», հ. 3, էջ 159—161 և այլն:

ունենում է ուղիղ ձևով գուգահեռ. հիշենք վերը բերված օրինակներից. «Ինչը համաձայնեց աշխատելու», նույնը կարող է լինել՝ «Ինչը համաձայնեց աշխատել»: Կամ՝ «Պատրաստվիր գրելու» և «Պատրաստվիր գրել», «Մեսրոպը դադարում է կառուցել» և «Մեսրոպը դադարում է կառույլ», «Քույրը խուսափում էր նրան հանդիպելուց» և «Քույրը խուսափում էր նրան հանդիպել» և այլն:

Հայերենում այս գուգահեռ ձևավորումը՝ տրական և ուղղական, բացառական և ուղղական, հատուկ է միայն անորոշ գերբային: Կարծիք կա, որ յուրաքանչյուր գուգահեռի տրական կամ բացառական հոլովաձևերում դրսևորվում է անորոշ գերբայի ավելի զոյականական հատկանիշը, ուղիղ ձևում՝ ավելի շատ բայականը: Նույն լրացումների դերում զոյականը միշտ միաձև է լինում, օրինակ. «Մայրը պատրաստվում է ժողովի» (ժողով ձևը բացառված է), «Մայրը խուսափում է ժողովից» (ժողով-ը բացառված է): Այս և պատճառը, որ անորոշ գերբայի գուգահեռ ուղիղ ձևը (պատրաստվում է գնալ, խուսափում է գնալ) անվանում են բացարձակ աներևույթ կամ բացարձակ անորոշ, այսինքն՝ անորոշ գերբային իբր իր գուտ գերբայական, չհոլովված վիճակում: Թեև հիշյալ անվանումները (հատկապես առաջինը) այսօր հնացած են, բայց այս դեպքում էլ կարևորը անունը չէ, այլ այն, որ թե՛ տրական, թե՛ բացառական և թե՛ ուղիղ ձևով գրված շարահյուսական այս միավորները ակնհայտորեն բայի լրացումներ են:

Փորձենք վերլուծել «Մայրը պատրաստվում է գնալու» նախադասությունը. կունենանք շարահյուսական 3 նվազագույն միավոր՝ 1. մայրը, 2. պատրաստվում է և 3. գնալու: Նույնը կունենանք, եթե վերլուծենք «Մայրը պատրաստվում է գնալ» տարբերակը. 1. մայրը, 2. պատրաստվում է, 3. գնալ: Երկու դեպքում էլ պատրաստվում է բայն ունի լրացում՝ մերթ գնալու, մերթ գնալ: Եվ ինչպես էլ մտնենալու լինենք հարցին, թե՛ գնալու-ն, թե՛ գնալ-ը բայի խնդիրներ են, որ նշանակում է՝ եթե գնալու-ն տրական հոլով ունի, ապա գնալ-ը պետք է ունենա ուղղական հոլով: Նույնը վերաբերում է գնալուց և գնալ գուգահեռներին, որոնք նույնպես երկուսն էլ բայի լրացումներ են՝ մեկը բացառականով խնդիր, մյուսը՝ ուղղականով: Այլ խոսքով, յուրաքանչյուր դեպքում առկա է միևնույն բայի միևնույն բովանդակությունն ունեցող երկու ձևի լրացում, համահիշենք՝ մի դեպքում տրական և ուղղական, մյուս դեպքում՝ բացառական և ուղղական:

Հաճախ էլ անորոշ գերբայը դիմավոր բայի լրացում է լինում միայն ուղիղ ձևով, առանց տրական կամ բացառական հոլովներով գուգահեռ ունենալու: Օրինակ, կարույանալ և կարող է բայերը սովորաբար ունենում են ուղիղ ձևով դրված անորոշ գերբայ լրացում, ինչպես՝ «Հորթը բաց կոսերը հազիվ էր կարողանում շարժիլ» (ԱԲԵ, 1, 49), «Նա անսխալ կարող էր ասել» (ԱԲԵ, 1, 50): Այս օրինակներում անորոշ գերբայները դիմավոր բայերի խնդիրներ են՝ գրված ուղղական հոլովով: Ինչպես տեսնում ենք, բերված օրինակներում առկա են անորոշ գերբայի՝ իբրև դիմավոր բայի լրացում (ուղղականով) հանդես գալու երկու տարբերակներ՝ 1) գուգահեռ ձևերով հանդես եկող լրացում (տրական-ուղղական կամ բացառական-ուղղական), 2) գուգահեռ ձև չունեցող, միաձև (միայն ուղիղ ձևով կամ ուղղական հոլովով) լրացում: Երկու դեպքում էլ անորոշ գերբայով արտահայտված այս լրացումները անուղղակի (բնության) խնդիրներ են: Իրանց պայմանականորեն անվանում ենք անորոշ անուղղակի խնդիր: Ստորև բերված են անորոշ անուղղակի խնդիրների (վերոհիշյալ երկու տեսակների) բնագրային օրինակներ. «Ձիավորը շտապում էր խույս տալ դրանցից» (ԲԵԺ, 7, 18), «Բազին հազիվ կարողացավ մինչև քարվանսարա նսանել» (ԱԲԵ, 1, 37), «Լայն առվի վրայից շատերը չէին կարողանում անցնել» (ԱԲԵ, 1, 164), «Ես երբեք չեմ դադարել դերասան լինել», «Կարողությունը հնարավորություն չունի համաշափ կերպով բոլոր օբյեկտներին ապա-

Շարահյուսական նվազագույն միավորը բառն է՝ իր տվյալ ձևով (հմտ. ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» հաս. գիտ., 1977, № 12, էջ 98):

հոգիով տնտեսողիկներով», «Սեղանը վախճանում դենի պատշգամբի տակ», «Դարչնագուլները սպառնում էին ֆիզիկական դատաստան տեսնել», «Խուտան ճգնում էր չիլիացիներին ստիպել մոռանալու ներուզայի անունը»:

Անորոշ դերբայը պարագա—Այս դերբայը լինում է տարբեր պարագաներ՝ հատկապես տրական (սեռական-տրական), բացառական և զործիական հոլովներով: Ինչպես, օրինակ, նպատակի պարագա՝ «Դու եկար նախատելու՞ քո հորը» (Բեժ, 7, 509), «Երեսնան գնացել էր ջուր բերելու», պատճառի՝ «Հոգնել էի երկար ֆալսետով», ժամանակի՝ «Հյուրանոց գնալով հազորդների նրան դեսպանի հրավերը», ձևի՝ «Կրճերն ուսած՝ քրովրտալով Ջուրն են իջնում աղջիկները» (ՀԲՆԺ, 1, 78), չափի և քանակի՝ «Ցորենը ծախել էր հինգ ուրլու» (տարբերել՝ «հինգ ուրլու ցորեն էր ծախել»-ուց, որտեղ դերբայը մականուն է):

Անորոշ դերբայը մականուն (որոշիչ, հատկացուցիչ)—Անորոշ դերբայը դոյականների նման լինում է մականուն տրական (քստ 7 հոլովի՝ սեռական) հոլովով, ինչպես խմելու ջուր, խոսելու նյութ, հարիսա եփելու աման և այլն: Բնորոշ է այն, որ այս պաշտոնում մեծ մասամբ դժվար է որոշել, թե անորոշ դերբայը որոշիչ է, թե հատկացուցիչ (այդ պատճառով կոչեցինք մականուն):

Անորոշ դերբայը կապի խնդիր—Գոյականների նման այս դերբայը լինում է կապի խնդիր, ինչպես՝ բերելու համար, գրելու մասին, բացի խոսելուց, աշխատանքը կատարելով հանգերձ և այլն:

Անորոշ դերբայը ստորոգելիական վերադիր—Անորոշ դերբայը ստորոգելիական վերադիր լինում է ուղղական, տրական, բացառական հոլովներով, ինչպես՝ «Նրա համար հաճույքը այգին ու արտերը ջրելն էր» (ԱԲԵ, 1, 162), «Դա խոսել չէր», «Արդյո՞ք խմելու է այս ջուրը» (սրանից պետք է տարբերել «Նա ջուրը խմելու է», որտեղ ընդգծվածը շարահյուսորեն անվերլուծելի է՝ պարզ ստորոգյալ):

Անորոշ դերբայը բացահայտիչ—«Եվ սիրով ընդունեցի բարեկամիս առաջարկը՝ ուսուցիչ լինել այդ հեռավոր գյուղում» (ԱԲԵ, 1, 146): Ընդգծված դերբայը բացահայտիչ է, կամ բուն բացահայտիչ (բառակապակցության գերադաս անդամ):

Անորոշ դերբայը անդեմ նախադասություն կամ անդեմ նախադասության գերադաս անդամ— «Մոռանալ» (ՎՏԵԺ, 1, 201), «Ելնել ճանապարհ» (ՎՏԵԺ, 1, 201), «Զվարթ ու թեթև քափառել աղատ» (ՎՏԵԺ, 1, 201):

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲԵ—Ա. Բակունց, Երկեր, հ. 1, 2, Երևան, 1979:

ՀԲՆԺ—Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1969:

ՄԳՄ—Մուրացան, Գեորգ Մարգարետունի, Երևան, 1978:

ՀՄԾ—Հ. Մաթևոսյան, Մատերը, Երևան, 1978:

ՀՄՄՎ—Հ. Մաթևոսյան, Մեր վազը, Երևան, 1978:

ՎՏԵԺ—Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1972:

Բեժ, 7—Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 7, Երևան, 1956:

ПАРАДИГМА СИНТАКСИЧЕСКИХ ФУНКЦИЙ НЕОПРЕДЕЛЕННОГО ПРИЧАСТИЯ

РАФАЕЛ ИШХАНИЯН

Резюме

Неопределенное причастие (инфинитив) в армянском языке имеет грамматические признаки как глагольного причастия (принимает гла-

гольные частицы ψ и χ (ψ իրել $>$ ψ իրվել, ψ իրել $>$ χ իրել), так и имени существительного (склоняется, может принять артикли ψ (ը), ψ , η). Эта специфика армянского инфинитива обуславливает особенности его синтаксических функций, которые в корне отличаются от синтаксических употреблений инфинитивов русского, английского, немецкого и ряда других языков. Неопределенное причастие армянского языка бывает подлежащим (ψ հարածելու էր խոստակել), прямым и косвенным дополнением (ψ իրում է երգել: ψ ուսափում եմ հանդիպելուց), а также предикативным членом, определением, обстоятельством и т. д.